

Մի քանի սրբագրութիւններ հայ մատենագիրներու մէջ.

1. Եկեալ յերկիրն Պալուսեանց, յաւանն մեծ Գիսանե, ի քաղաքագիւղն հուառս, ոմանք ի քրմացն անդ հանդիպեցան: (Ձենոբ, տպ. Վենետիկ 1832, էջ 25):

Գիսանէ անուենով աւան մը գոյութիւն ունեցած չէ. այն աւանը՝ ուր դէպքը տեղի կ'ունենայ, կը կոչուէր հուառս, ինչպէս կ'երևայ Ձենոբի յաջորդ էջերէն:

Հատուածը պէտք է ուղղել՝ «Եկեալ յերկիրն Պալուսեաց, յաւանն մեծ Գիսանեի, ի քաղաքագիւղն հուառս... ևն»:

Կուառսը Գիսանէի մեհեանին կալուածն էր, ինչպէս որ յետոյ ալ եղաւ Ս. Կարապետի կալուածը (Ձենոբ, էջ. 37): Թէև Ձենոբ սովորաբար կը հօլովէ Գիսանեայ, (այսպէս էջ 8, 15, 16, 25, 31, 36, նոյնը նաև Ուխտ. Ա. հդ), բայց Գիսանէի ձևն ալ անծանօթ չէ իրեն. այսպէս՝ էջ 27, 34:

Էջ 32 կ'ըսուի «Ձի այնչափ էին դեքն ի տեղոջն Գիսանե, որչափ ի սանդարամետս անդեդոց». պէտք է նոյնպէս ուղղել Գիսանէի. իբր թէ «Ձի այնչափ էին դեքն Գիսանէի ի տեղոջն» ևն:

2. Յետ այսր դործոյ, մինչ վարէր զիշխանութիւնն ճուխաբար Գրեգոր, ոչ ժուժացեալ չարին՝ արկ նախանձ ի սիրա Բաբգէնի՝ եղբօր, Փիլիպպէի, որդւոյ Վասակայ... և սպան Բաբգէն զԳրեգոր: (Օրբելեան, տպ. Էմինի, էջ 123):

Ստորագծեալ բառը պէտք է ուղղել որդւոյ: Վասակ ունէր միայն երկու որդի՝ Փիլիպպէ և Սահակ. Փիլիպպէ թողուց երեք որդի՝ Բաբգէն, Վասակ, Աշոտ: Այս Բաբգէնը թշնամանալով Սահակի որդի Գրեգորի հետ, սպաննեց զայն: Ահա այս է վերոյիշեալ Բաբգէնը: Սիւնեաց իշխաններու մանրամասն ազգահամարը հուտայ Օրբելեան՝ գլուխ ԾԳ, ուր Բաբգէն Փիլիպպէի որդին է և Վասակի թոռը: Հմմտ. Մեռանի Փիլիպպէ և թողու երիս՝ զԲաբգէն, զՎասակ և զԱշոտ (էջ 217). Իսկ յետ աւուրց վասն դոյզն պատճառի ի վերա հայրենեաց՝ պատերազմին ընդ իրեարս Բաբգէն՝ երէց որդի Փիլիպպէի և Գրեգոր՝ որդին Սահակայ. և հարստեալ Բաբգէնի զԳրեգոր դիաթաւալ կացուցանէ (էջ 217). Տէր Բաբգէն և Տէր Վասակ և Տէր Աշոտ՝ իմ Փիլիպպէի որդեք (էջ 152): Հմմտ. նաև Յովհ. Կաթ. գլուխ ԻԵ:

3. (Սմբատ) զմայրն իւր զՆուշան և զԿինն իւր Սոփի, որ էր գուսար Դերենկին և քոյր Գագկայ թագաւորելոյն ի Վաս-

պուրական, փոքրիկ ստնտեայ տղայիւ միով, և զկինն Սահա-  
կայ՝ եղբօր իւրոյ, որ էր դուտար բզեխշին Գուգարաց, սա-  
րեալ ամբացուցանէն յանառիկ ամուրն երնջակայ և ինքեանք  
փախստեայ լինին: Սմբատ զնայ առ աներն իւր Գաղիկ ի  
Վասպուրական, և Սահակ առ իւր աներն ի Գուգարս: (Օր-  
բեւ. էջ 135):

Հատուածին առաջին մասէն կերևայ որ Սմբատի կինը  
Գերենիկի աղջիկն է և Գաղիկ Արծրունիին քոյրը. հետեալաբար  
քիչ մը վարը դրուած աներ բառը պէտք է հասկնալ «անե-  
րորդի», ասիկա սակայն սխալ մը չէ, այլ օրինակ մըն ալ կ'ա-  
ւելցնէ նշի-ի յիշած այն վկայութեանց վրա, որոնցմէ կ'երևայ  
որ աներ գործածուած է նաև «աներորդի» նշանակութեամբ:

4. Գայ ապա և առ Յուսուփի Աշոտ՝ եղբայր Սմբատայ  
արքայի և հնազանդի նմա. ըմբռնէ նա ի պատերազմի և  
զՄուշեղ՝ զորդին Սմբատայ: (Օրբեւ. էջ 137):

Պատմութենէն դիտենք որ Սմբատ Ա. Յուսուփի զէմ  
զրկեց իր Աշոտ և Մուշեղ որդիները. Սմբատ չունէր Աշոտ  
անունով եղբայր մը. եթէ այսպէս ըլլար, ուրեմն Աշոտ Ա.  
համանուն որդի մը պիտի ունենար, ինչ որ Հայոց մէջ սովո-  
րական չէ: Այս պատճառներով վերի հատուածին մէջ եղբայր  
պէտք է ուղղել որդի:

5. Ի վախճանէն Գէորգայ կաթողիկոսին մինչ ի ժամա-  
նակս յայս Անանիայի (Մոկացւոյ), յաւուրս հինգ կաթողի-  
կոսաց՝ Մաշտոցի, Յովհաննիսի, Ստեփաննոսի, Եղիայի և Թէո-  
դորոսի: (Օրբեւ. էջ 201):

Կաթողիկոսներու այս շարքը պէտք է հասկնալ հետե-  
ւեալ ձևով.

Գէորգ Բ. Գառնեցի	876—897.
Մաշտոց	897
Յովհաննէս Զ.	897—924
Ստեփաննոս Բ.	924—925
Թէոդորոս Ա.	926—936
Եղիշէ	936—941
Անանիա Մոկացի	941—965

Թէոդորոսի յաջորդն է Եղիշէ. այսպէս ունին Ասողիկ Գ.  
Ե, Մխ. անեցի Գ. և նայն իսկ Օրբեւեան՝ էջ 366 դրւած ցան-  
կին մէջ: Ըստ այսմ վերի հատուածին մէջ ալ Եղիայի ուղղե-  
լու է Եղիսայի. ձեռագիրներուն մէջ արդէն մէկ օր. ունի  
«Եղիսէի»:

6. Հասանէ վախճան կաթողիկոսին Հայոց տեառն Անա-  
նիայի և փոխեն զնա ի հանգիստ ի վանսն Արգինայ: Եւ թա-  
գաւորն Աշոտ՝ սեղի Սմբատայ, առնէ ժողով եպիսկոպոսաց և  
հարց սրբոց... ընտրեալ զՎահան... օժանեն զնա կաթողի-  
կոս Հայոց: (Օրբ. էջ 211):

Այս Անանիան է Անանիա Մոկացի, որ վախճանեցաւ 965 թուին և որուն յաջորդէց Վահան: Այս թուին Հայոց թագաւորն էր Աշոտ Գ. Ողորմած, որդի Աբասի և ո՛չ թէ Սմբատի: Աբաս էր որդի Սմբատի: Ուստի վերի հասուածք կ'ուզուէմ Աոս՝ որդի Աբասայ, որդւոյ Սմբասայ:

Արտագրողները երկու բառ փախցուցած են:

7. Ազդէ գայս... և միւս իշխանին որ ի Գեղամ գաւառի լինէր՝ Գրիգորի Սուփանայ որդւոց՝ Գաբուռայ և Սահակայ: (Օրբել. էջ 163):

Խօսքը թէ՛ անմիտ է և թէ սխալ. Գաբուռ և Սահակ իրարու եղբայր չեն և ոչ ալ Սուփանը ունի երկու այս անուն որդիներ: Գիտենք միայն Գրիգոր Սուփան իշխանը, որդի Սահակայ, և եղբայր Հրահատի և Գազիկի. Գրիգոր Սուփանի որդիներն էին Վասակ Գաբուռ և Հրահատ. իսկ Վասակ Գաբուռի ուղիներն էին Գրիգոր Սուփան, Սահակ և Վասակ: Ամէն ինչ կ'ուզուի, եթէ մէկ տառ և կէտադրութիւնը փոխենք հետևեալ ձևով. «և միւս իշխանին՝ որ ի Գեղամ գաւառի լինէր՝ Գրիգորի Սուփանայ՝ որդւոց Գաբուռայ և Սահակայ.» (լուր տուին Վասակ Գաբուռի որդոցը՝ Գրիգոր Սուփանին և Սահակին): ց տառն ալ կարելի է պահել, եթէ բառերու տեղափոխութեամբ մը բսենք՝ «...Գրիգորի Սուփանայ և Սահակայ՝ որդւոց Գաբուռայ»:

8. Վասն ապստամբութեան Տաճկացն որ Կայսեկքն կոչին և իշխանին Սիւնեաց ի քաղաւորիլն Սմբատայ, և դարձեալ երկեցունց հնազանդութիւն:

Թովմա Արծրունւոյն Պատմութեան (տպ. Պետերբ. 1887)

Գ. Գաբուլթեան ԻԸ գլխին վերնագիրն է այս, որ ճիշտ նոյն ձև ունի նաև էջ Ժ՝ ըսնկին մէջ:

Գլխին մէջ կը պատմուի թէ ինչպէս «գորաժողով եղև թագաւորն Հայոց Սմբատ... զի որդեքն Աբգոհամանի, որ կայսեկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ քաղաւորիլն» և յետոյ «եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ քաղաւորիլն Հայոց» ևն: Պատմութիւնը կը ցուցնէ որ վերնագրին մէջ ի քաղաւորիլն բառը պէտք է ուղղել ի քաղաւորէն:

9. Զերիվարսն և զհեծեալս նոցա զինեալ սպառազինօք, շունչապահս ձիոցն և տաշտս գաւաղացն և զանգապահս ի շորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զբահս, և ռանատրոփ փռնկալոյն մանեակս զանգաղեալս, և մահիկս լուռնաձևս ի մէջ ճակատուն կապեալ, և զնիւս երիվարացն երկաթապատ պնդեալ. այլ և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու

մածուցեալ ի ձե վահանի զգործ արւեստի զինդէն ցուցանեն» (Արծր. տպ. Պտկ. էջ 132):

Ամբողջ հասուածը հը վերաբերի ձեռն զարդարանքին ըստ զրահաւորութեան: Գրգեալ «փայփայած» ձեռն ամենեւին յարմարութիւն չունի: Ըստ իս պէտք է ուղղել զոգեալ «փորած, փոսցուցած», որով հը թարգմանել «...տախտաւը ձեռն փորին չափով փռելով՝ փորին երկու կողմէն վահանի պէս փակցուցած էին...»:

10. Եւ զարձեալ թագաւորէ եղբայր նորա Խոսրով (Գ) ամ մի և ապա Արտաշիր, և Արտաշէս թագաւորէ յետ նորա: (Կիր. Գանձ. Վենետիկ 1865. էջ 18):

Գրուածքին այս վաճառիկն մէջ կ'երևայ որ Արտաշիր և Արտաշէս տարբեր անձեր են, ինչպէս հը նկատէ նաև Կիրահոսի հրատարակիչը (նոյն էջ. ծան. 1): Բայց անշուշտ այսպէս չէր բնագիրը և ունէր պարզապէս «... և ապա Արտաշիր, (որ և Արտաշէս) թագաւորէ յետ նորա»: Առիկա կ'ապացուցուի Կիրահոսի յաջորդ էջին մէկ տողով. «Յայտմճեմէ բարձաւ թագաւորութիւնն Արշակունեաց յետ Արտաշիրի, որ թագաւորեաց ամս վեց»: Եթէ Արտաշիրը վերջին թագաւորն է, ուրեմն Արտաշէս ըստ Կիրահոսի տարբեր չէ Արտաշիրէն:

11. Տարաւ իւրով ծախիւք և գրաստիւք զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք եղբայրք մեր Սարգիս և Գրիգոր, և աւագերէցն Տիխեց տէրտէրն: (Վարդան պամ. տպ. Վենետ. էջ 155—156. այսպէս է նաև Կմինի հրատարակութեան մէջ, էջ 204):

Հատուածին վերջին տողին մէջ աւագերէց և տէրտէր իրարու անյարմար են. Տիխիսի քահանան կամ աւագերէց էր, կամ պարզ տէրտէր. միաժամանակ չէր հընար երկուքն ալ ըլլալ: Խօսքին կազմութենէն այնպէս կ'երևայ որ երկուքէն մէկը յատուկ անուն է: Եթէ Աւագ բառն առնենք իբր յատուկ անուն, երկց և skrskr թէև հոմանիշ, բայց աւելորդ կրկնութիւն մը կ'ըլլայ: Ըստ իս իբր յատուկ անուն առնել պէտք է skrskr բառը, որով թէ՛ խօսքին շարահատութիւնը ճիշտ կ'ըլլայ և թէ՛ նախորդ խօսքին համադրութիւնը պահուած կ'ըլլայ (նախ բացայայտիչ, յետոյ բացայայտեալ). այնպէս՝ վարդապետք եղբայրք մեր՝ Սարգիս և Գրիգոր, և աւագերէցն Տիխեաց՝ Տէրտէրն»:

Skrskr իբր յատուկ անուն՝ զարմանալի չէ, որովհետև ունինք ուրիշ տեղեր՝ Տէր Խորձենացի (Խոր. Գ. ԾԴ. Փարպ. Ժ. Տէր Եպս. Կամինական (Կոր. էջ 14), Տիրացու վրդ. Վանանդեցի (Մեծոփ. յիշատ. Ա), Տիրացու Եպս. Թաղէոս առաքելոյ

վանուց (Օրբել. ԿԹ), Տիրացու եպոս. Վասպուրահյանի (Կիր. Ե), Տիրացու քահանայ Մշեցի (տե՛ս ցուցակ Ձեռ. Թաւրիզի, էջ 113 Բ), Սարկաւագ եպոս. Գողթան (Օրբել. ԿԸ), Սարկաւագ վրդ. Գեակայ վանից (Կիր. ԺԱ), Սարկաւագ քորեպիսկոպոս Ստեփաննոս Գ. Կաթողիկոսի Աղուանից (Կիր. Դ), Երիցակ եպոս. Սիւնեաց (Օրբել. ԺԹ. Խա. Խե. հա):

12. Ունէր Սելեկոս շորս դասերս, Լեոզիկա՝ յորոյ անունն շինեաց զԼաւոզիկէ, որ է Չատիկ (Միխայէլ ասորի, տպ. Երուսաղէմ, էջ 99):

Լաւոզիկէն քաղաք մըն է՝ որուն անունը յունարէն բառով կը նշանակէ «ժողովրդագատ»: Հեղինակին «որ է Չատիկ» բացատրութիւնը կ'ենթադրէ որ ժողովրդագատ բառը Չատիկ բառին մեկնութիւնն է: Բայց կարծեմ որ այստեղ պարզ ձեռագրական (կամ դուրսէ տպագրական) սխալ կայ: Չատիկ պէտք է ուղղել Լասիկ, որ Լաւոզիկէի նոր անունն է և որ կը գտնենք նաև Միխ. ասորիին քով մի քանի անգամ: Հմմտ. նարկէսոս ի Լատիկն, առին անդ 7000 դերիս (էջ 449) Պաշարեաց զԼատիկն և առ զնա (էջ 501). ի շարժմանէ կործանեցաւ Լատիկն (էջ 265): Կարելի է նաև որ բնագրին մէջ հին տառադարձութեամբ գրուած ըլլար Լատիկ, ինչպէս կը գտնենք էջ 180. «Էառ թագաւորն զպատիւ քաղաքին զկոչին մայր քաղաքաց, և ետ Լատիկ քաղաքին»:

Այսօր Լատիկ անունով ծանօթ է Երկու աւան Փոքր-Ասիոյ մէջ. առաջինը Սամսոնէն Ամասիա տանող ճամբուն վրայ (Լատիք), երկրորդը Գոնիայի հիւսիսային կողմը (Եօրդան-Լատիք):

13. Չայսու աւուրբք ելին Պարսիկք ի Միջագետս և դերեցին մինչև ի Հալապ և յԱնտիոք կամակարողութեամբ, մինչև տարին զկնի սիւնս կոնս (Միխ. աս. 261):

Պէտք է ուղղել սիւնս կոնայս. ինչպէս կը գտնենք նաև էջ 312. «Ժանր աւարաւ դարձաւ ի Պարսս, մինչև տանել նմա սիւնս կոնայս և անօթս պղնձիս»:

Վերջին յատուածին մէջ մէկ ձեռ. ունի կոնս, որ կը յիշեցնէ առաջին սխալ ձևը:

14. Յանձնելով զնա մեծ իշխանին Սիրատնայ (իմս՝ սիր Ատանի), սոսկալի երգմամբ, տալ զնա որդւոյ թագաւորին Ունիւաց. մկրտելով զնա հայ դաւանութեամբ, զի դեռ երեկոյ էր: Որոյ նենգեալ ախտիս ըստ բնական ատելութեանն Յունաց ընդ ազգիս Հայոց (Միխ. աս. էջ 514):

Ուղղել ուխտին:

15. Յորում ժամանակի այրեցաւ վանք որբոյն Սիմէոնի յԱնտիոք, և քաղաւոր եղև ի բնակչաց (Միխ. աս. էջ 264):

Ուղղելի է քափուր:

16. Գնաց Բլղուր զօրագլուխն Տաճկաց ի Կիպրոս և յատակեաց քակեաց ծակախիլ արար զամենայն կղզին (Մխ. աս. 334):

«Ծակախիլ արար» ձևը անհարմար է տեղին: Չեռագիրներէն մէկը ունի տակախիլ արար, այսինքն «արմատէն քանդեց»: Այսպէս պէտք է ուղղել նաև բնագիրը:

17. Եւ արդ ունի աղգն Յարեթի յԱկնէն Տիգրիս գետոյ որ բաժանէ ընդ Մազէ և ընդ Պարսս (Մխ. աս. 15):

Տպուած է յԱկնէն, իբր յատուկ անուն. (արդեօք Ակն քաղաքը հասկցուած է): Պէտք է ուղղել յակնէն (կամ ինչպէս ուրիշ ձեռագիրներ ունին՝ յականէն) «ակունքէն, բղխած տեղէն»:

18. Զսա Առեկաս աւետարանիչն յիշէ, զի եկեալ էր քարձողն կռապաշտութեան և Մովսէս արածապատմն ոչ յիշէ վասն ասացելոյ պատճառին (Մխ. աս. 18):

Արածապատմ բառ մը գոյութիւն չունի. պէտք է ուղղել արարածապատմ, որ մեր հին մատենագրութեան մէջ Մովսէս մարգարէին յատուկ վերագիր մըն է (Արարածոց գրոց պատմիչ):

19. Տէր Գրեգորիս նստաւ յաթոռ հայրապետութեանն հրամանաւ Գագկայ շահնշահի՝ որդւոյ Աբասայ Կարսեցոյ (Մատթ. Ուռհայեցի, տպ. Էջմիածնի, էջ 155):

Այսպէս է Ուռհայեցւոյն երկու օրինակներուն մէջ. քայց Գագիկ Կարսեցի թագաւոր մը գոյութիւն չունի, պէտք է հասկնալ Գագիկ թագաւոր Կարուց, որդի Աբասայ, և ըստ այսմ ուղղել Կարսեցոյ. արդէն երկու ձեռագիր ունին կիսացւոյ, երկու ուրիշ ձեռագիր և Երուսաղէմի ապագրութիւնը՝ կարսցւոյ: Էջմիածնի հրատարակիչները հետեւելով ընտրելագոյն ձեռագրին, բնագրին մէջ ներմուծեր են այս ակներև սխալը:

Գագիկ Կարսեցին յիշուած է նաև այլուր, էջ 183. «Գագիկ արքայ որդի Աբասայ Կարցւոյ» (մէկ ձեռ. ունի կարսցոյ), որ նոյնպէս ուղղելի է Կարսեցւոյ:

Ուռհայեցին այս ախաղոսը կը գործածէ զանազանելու համար Կարուց թագաւորը Գագիկ երկրորդէն, զոր կը կոչէ Անեցի. «Թագաւորքն և իշխանքն Հայոց, Գագիկ անեցի և Ատոմ և Ապուսահլ՝ որդիք Սենեքարիմայ» (Ուռհ. 138):

20. Եւ զայր անցանէր ընդ դաշտն քաղաքին Մարաշայ, և անթիւ բազմութեամբ հասանէր յերկիրն Գող Վասլին. ի տեղին, որ կոչի Բերդուս, ի սահմանս հուիթականն (Ուռհ. 306):

Նուիրակիան ածականը չի յարմարիր հոսս, կը կարծեմ որ պէտք է առնել իբր յատուկ անուն:

21. Արարին ժողով յեկեղեցին ի սուրբն Յովհաննէս և առ պապիոսն Փռանդաց վասն միաբանութեան. զի երկնչէին՝ թէ դարձեալ անկանի քաղաքն ի Տանգրի և նա տայ զմեզ ի ձեռն Ռաջարդին. զի նա յորժամ ունէր զքաղաքն Ուռհա, բազմաց աւեր արար: Իսկ յորժամ եկին ի մի վայր քաղաքացիքն Ահոկոյ՝ բանս խօսեցան ընդ պապիոսն և ասացին. «Զերմարդ և մեր թող պահեն զկլայն քաղաքին, մինչև մեզ տէր յայանի»: . . . արարին վասն այն խօսիցն քննութիւննս և համարեցան զայն բան արատ. . . (Ուռհ. 309):

Ահոկ անունով քաղաք չկայ. պապիոսը Ուռհայի մէջ է, ուր կը գտնուէին նաև վերոյիշեալ քաղաքացիները: Ահոկ հասարակ անուն է՝ յանցանք, վնաս, պակասութիւն, մեղադրութիւն» նշանակութեամբ, որ գործածական է յետին ժամանակի մասենադրութեան մէջ. ինչ. Վրթ. քերթ. Լմբ. ՍՊ. Մխ. Բժշ. Ազիլի. Վսակ: Հատուածը պէտք է ուղղել՝ «Իսկ յորժամ եկին ի վայր քաղաքացիքն, ահոկոյ բանս խօսեցան ընդ պապիոսն և ասացին» (երբ քաղաքացիները հաւաքուեցան, մեղադրական խօսքեր ըրին պապիոսին և ըսին):

22. Ուռհ. 307, Գող Վասիլի օգնական զինւորականներու մէջ կը յիշուի նաև «Տիրան այր քաջ, որդի ազնուական ի մեծամեծացն Հայոց»: Երկու ձեռ. և երոշմադէմի տպագրւորը Տիրան բառին տեղ ունին Տիգրան: Ըստ իս այդ է ուղիղ ձևը, որ պէտք էր դնել բնագրին մէջ: Այս բանը կը ցուցնէ նոյն անունին երկրորդ յիշատակութիւնը (էջ 325), ուր բոլոր ձեռագիրներն ալ հաւասարապէս ունին Տիգրան. «Յայտմամի յառաջ սպանան երկու իշխանքն մեծք՝ Տիգրան և Ապլասաթ, թուրք զօրացն, ի յերկիրն Լեոնի՝ Ռուբինայ որդւոյն, որք էին ի զօրացն Վասիլին»:

Գրեգոր Երէցի շարայարութեան մէջ ալ կը յիշուի Տիգրան մը՝ որ անշուշտ նոյն է յիշեալ անձին հետ. «ԶՎասիլն, որ էր տէր Բարձրաբերդոյ և եղբայր Տիգրանայ» (էջ 401): Զեռագրական տարբերութիւն չկայ, բոլորն ալ ունին Տիգրանայ:

23. Յայնժամ յազդմանէ յարին կրկին շարժումն լինէր Յունաց դաւաճանութեամբ և կեղծաւորութեամբ սուտ քրիստոնէին Գաւթի Անհողինին, զոր հարկ եղև մեզ զանուն. նորա փոխել և ասել թէ Իսաիթ, վասնզի ի վին տառապանաց էած զազգս քրիստոնէից. և ինքն հոգւովն տանջեալ եղև ի բանսարկուէն և ի վին կորստեան յաւիտենից տանջանացն մատնեալ լինէր (Ուռհ. 88):

Ձեռագիրները ակնյայտնի կերպով կը ոխալին ըստին ալ, երբ կը գրեն 'Իսախր: Հեղինակը կ'ըսէ Գաւիթ Անհողինի համար, թէ անոր չարութեան պատճառով անունը փոխեցինք և դրինք... Ինչ դարձեալ Գաւիթ: Երուսաղէմի տպագիրը ունի այստեղ 'Իահվիդ, որ մի քիչ աւելի լաւ է: Ըստ իս պէտք է սուղեղ դավիհդ, հեղինակին կողմէ յարմարցուած բառախաղ մըն է, իբր դա է վիհդ: Այս բանը կը ցուցնեն յաջորդ տողերուն ի վիհն սուապ սիւսց, ի վիհն կորսեան բացատրութիւնները:

24 Մեռաւ թագաւորն Հայոց Յովհաննէս՝ եղբայրն Աշոտայ, որդի Գագիայ, որդւոյ Աշոտայ, որդւոյ Սմբատայ, որդւոյ Երկաթայ (Ուռհ. 84):

Այս ճիւղագրութիւնը կարօտ է մեկնութեան: Հասուածին սկիզբը յիշուած Յովհաննէսը՝ Բագրատունեաց վերջընթէր թագաւոր Յովհաննէս-Սմբատն է, որուն յաջորդող երեք անուններն ալ պէտք է հասկնալ այսպէս. «եղբայրն Աշոտայ, որդի Գագիայ Ա, որդւոյ Աշոտայ Գ. Ողորմածի»: Ասկէ ետք ճիւղագրութիւնը կը կազայ:

Ո՞վ է Սմբատը: Եթէ Սմբատ Բ-ն է, ասիկայ ո՛չ թէ Աշոտ Գ-ի հայրն է, այլ որդին և Գագիկ Ա-ի եղբայրը: Եթէ Սմբատ Ա-ն է, ինչպէս կրնանք ըսել «որդւոյ Երկաթայ», այսինքն Աշոտ Բ-ի, երբ գիտենք որ Աշոտ Երկաթը Սմբատ Ա-ի որդին է:

Ըստ իս հասուածին մէջ երկու բառ փախցուցած է գրիչը: Աշոտ Գ-ի յիշատակութենէն յետոյ՝ ընագրին մէջ պէտք է գրուած ըլլար «որդւոյ Աբատայ» բառերը. և իբօք որ Աշոտ Գ. Ողորմածը՝ եղբայր Աշոտ Երկաթի, որդին է Սմբատ Ա-ի. ուրեմն որդւոյ Սմբատայ բառերով պէտք է հասկնալ Սմբատ Ա-ը: Բայց այն ժամանակ «որդւոյ Երկաթայ» չի յարմարիր, որովհետև սովորաբար Աշոտ Երկաթ անունով մենք կը հասկնանք Աշոտ Բ-ը: Սահայն ակներև է որ Ուռհայեցւոյն քով Երկաթ կը կոչուի ո՛չ թէ Աշոտ Բ-ը, այլ Բագրատունեաց հիմնադիր Աշոտ Ա-ը, որ Սմբատ Ա-ի հայրն է:

Թէ մեր այս սրբագրութիւնը և Աշոտ Երկաթի մասին տուած բացատրութիւնը սխալ չէ, կը ցուցնէ նաև Ուռհայեցւոյն երկրորդ ճիւղագրութիւնը (էջ 86). «Յայնժամ զարթուցեալ մանուկ մի ութ և տասն ամաց՝ Գագիկ (Բ) անուն, ի նոյն շառաւիղէն Բագրատունեաց, որդի Աշոտայ արքային (բռնաւորը), որդւոյ Գագիայ (Ա), որդւոյ Աշոտայ (Գ), որդւոյ Աբատայ, որդւոյ Սմբատայ (Ա), որդւոյ Երկաթայ (Աշոտ Ա.)»: Այս ճիւղագրութիւնը սուղիղ է և ըստրովին կը համապատասխանէ մեր միւս պատմիչներուն:

Ուռհայեցին երրորդ անգամ մ'ալ (էջ 218) կուտայ Բագրատունի թագաւորներու ճիւղագրութիւնը. «Սպանաւ Գագիկ շահնշահն (Բ), որդի Աշոտայ (բռնաւորը), որդւոյ Գագ-

կայ (Ա), որդւոյ Սմբատայ, որդւոյ Երկաթայ, բազրատունի ազգաւ»։ Այս ճիւղագրութիւնը աւելի պակասաւոր է։ Նախորդ երկու հատուածներուն համեմատութենէն կ'երևայ որ «որդւոյ Գագկայ» բառերէն յետոյ պէտք է աւելցնել «որդւոյ Աշոտոյ, որդւոյ Աբասայ»։ Այս բառերն ալ գրչին ու շագրութենէն սպրդած են և բնագրին մէջ անպատճառ պիտի գտնուէին։

25. Յայտմամբ մեռաւ սքանչելագործն և մեծ ճգնաւորն Մարկոս միայնակեացն. որ զամս 65 կայր ի խոտածարակութեան վարս... և էր բնակեալ ի յանջրդի լեառն մի ի Մոկացն գաւառին, որ ասի Կոնգոնակ, որ էր ասորի Խարսինակքն, մերձ ի յաշխարհն Մարաշ քաղաքին (Ուռհ. 300-301)։

Մոկաց բառին դէմ երեք ձեռագիր ունին Կոկաց, բայց հրատարակիչները ընտրած են Մոկաց ձևը։ Ըստ իս ուղիղն է Կոկացն։ Մոկաց գաւառը շատ հեռու է Մարաշէն ու կ'ընկնի իրայէն։ Մարկոս ճգնաւորի մասին կը խօսի նաև Վարդան պատմիչ (տպ. Վենետիկ), ԿԶ հատուածին մէջ, նոյն մանրամասնութեամբ, ինչպէս Ուռհայեցին, և աւելի պարզ։ Ուռհայեցիին քով որոշ կերպով չի հասկցուի թէ ինչը կը կոչուէր Կոնգոնակ. լեռը թէ գաւառը. Վարդան կը ցուցնէ թէ լեռան անունն է Կոնկոնաք, որ միևնոյն Կոնգոնակ բառն է. իսկ գաւառը կը կոչուի Կոկաց և ո՛չ թէ Մոկաց։

26. Յորժամ եկիր առ մեզ ի յԱշոտոյ շահնշահէ և հոգիական զաւակէ մերմէ և դարձուցեր զամենայն սրամտութիւնս ի նմանէ և տարար զԲագրատ ի Պասլն Յանձաւացին. դու ել ես Սաս թոռնեցին պռթօսպաթարն (Ուռհ. 28)։

Ստորագծեալ մասը Երուսաղէմի ապագրութեան մէջ «գոյնպէս և զՍմբատ» ձևն ունի։ Հրատարակիչները ամենևին ուշագրութեան առած չեն որ միևնոյն իշխանը՝ էջ 18 կը յիշուի Ստատ անունով. «իմաստասէրն Ասոն և Ստատ իշխանն թոռնեցին»։ Մինչև անգամ երկուքը իբր տարբեր անձեր յիշած են ցանկին մէջ՝ Սատ թոռնեցի և Ստատ թոռնեցի։ Երուսաղէմի ապագրութեան մէջ Ստատ ձևին դէմ ալ կը գտնենք Սմբատ, որով կը տեսնուի որ Երուսաղէմի օրինակը հեռակողական եղած է։ 'Ինչու Սաս յայանի կերպով սխալ է. ուստի կամ պէտք է ուղղել (իբր մէկ բառ) Եսսատ, կամ համաձայն նախորդին՝ Ստատ։ Սմբատի պէս հանրածանօթ անուն մը հաղիւ թէ կարելի ըլլար աղաւաղել. իսկ Ստատ որ ուրիշ տեղ բնաւ չպատահող անուն մ'է, մեծ զիւրութեամբ կրնար աղաւաղուիլ։

27. Եւ ահա գայր Վասակ՝ հայրն Տէր Բարսեղի և եղբարք նորա՝ Հասան և Գրիգոր և Ապլջապակ (Ուռհ. 221)։

Վերջին բառին դէմ երեք ձեռ. ունին Ապլջակապ, Երուսաղէմի ապագիրը Ապլջահապ։ Առաջին երկու ձևերը ուրիշ տեղ գոյութիւն չունին. բայց Ապլջահապ գիտէ Ուռհայեցին՝ էջ 11. «և որդեաց նորա Ապլջահապայ և Վասակայ և Սարէ և ամենայն զօրացն տայր թագաւորն Հայոց գաւառս և զիշխանութիւնս»։ Ըստ այսմ ուղղելի է Ապլջահապ։